



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2014 թվականի երկրորդ կիսամյակում (վերլուծություն)

2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 113946 գործարք, որոնց քանակը, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 13.7 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 10.6 %-ով :

2014 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի առաջին կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2014 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 27531 օտարման գործարքների 74.5 %-ը կազմել է առուվաճառքը, 25.2 %-ը՝ նվիրատվությունը և 0.3 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքների

քանակի 40.5 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.7 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2014 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի օտարման գործարքների քանակը, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 11.3 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 3.1 %-ով: 2014 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 8297 առուվաճառքի գործարքների 63.8 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2014 թվականի երկրորդ կիսամյակում, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 11.3 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 5.5 %-ով:

2014 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	երկրորդ կիսամյակ 2013 թ.	երկրորդ կիսամյակ 2014 թ.	առաջին կիսամյակ 2014 թ.
Կենտրոն	428000	428000	428000
Արաբկիր	356600	356600	356600
Քանաքեռ-Զեյթուն	282500	282700	282700
Նոր Նորք	251500	252700	252300
Ավան	259600	260200	260100
Էրեբունի	249300	251000	250700
Շենգավիթ	255200	256500	256100
Դավթաշեն	274800	275200	275150
Աջափնյակ	248400	249600	249500
Մալաթիա-Սեբաստիա	241500	242400	242000
Նուբարաշեն	152800	156100	155200
Միջինը Երևանում	272700	273700	273500

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի երկրորդ կիսամյակում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ² մակերեսի շուկայական միջին գները, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել են 0.1 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 0.4%-ով:

2014 թվականի երկրորդ կիսամյակում մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 2410 բնակարան, որոնց քանակը 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 8.3 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 6.6 %-ով:

2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ² մակերեսի հաշվարկով

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		երկրորդ կիսամյակ 2013 թ.	երկրորդ կիսամյակ 2014 թ.	առաջին կիսամյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	115000	116000	115700
	Ապարան	56900	57550	57400
	Թալին	64700	65900	65500
Արարատ	Արտաշատ	94900	97000	95850
	Մասիս	115000	115750	115200
	Վեդի	99900	100700	100400
	Արարատ	75200	75500	75350
Արմավիր	Վաղարշապատ	154100	154150	154150
	Արմավիր	121200	121200	121200
	Մեծամոր	87500	87500	87500
Գեղարքունիք	Սևան	99150	99200	99200
	Գավառ	59400	59850	59800
	Մարտունի	107600	107700	107650
	Վարդենիս	44600	44800	44800
	Ճամբարակ	28400	28700	28700
Լոռի	Վանաձոր	88400	88500	88400
	Ստեփանավան	74500	74500	74500
	Սպիտակ	99800	99800	99800
	Ալավերդի	55000	55050	55000
	Տաշիր	47200	47300	47300
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20300	20200
Կոտայք	Աբովյան	155100	155100	155100
	Նոր Հաճն	128600	128600	128600
	Բյուրեղավան	108100	108150	108150
	Եղվարդ	109300	109400	109400
	Հրազդան	63800	63850	63800
	Ծաղկաձոր	292500	292500	292500
	Չարենցավան	85500	85550	85500
Շիրակ	Գյումրի	109300	109300	109300
	Արթիկ	66500	66700	66667
	Մարալիկ	40400	40700	40700
Սյունիք	Գորիս	121700	122500	121900
	Կապան	92200	93150	92400
	Սիսիան	91100	91300	91150
	Մեղրի	80400	81000	80900
	Ագարակ	46500	46900	46900
	Քաջարան	94600	94700	94650
	Դաստակերտ	8000	8000	8000
Վայոց ձոր	Վայք	95000	95000	95000
	Եղեգնաձոր	124600	125550	125208
	Ջերմուկ	112300	112950	112700
Տավուշ	Դիլիջան	113100	113600	113150
	Իջևան	118300	118300	118300
	Բերդ	60100	60250	60200
	Նոյեմբերյան	49600	49900	49900
	Այրում	31700	31850	31850

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1 մ² մակերեսի շուկայական միջին գները, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել են 0.2%-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 0.3%-ով:

2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տների 2767 առուվաճառքի գործարք, այդ թվում Երևանում՝ 797, մարզերում՝ 1970: 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 9.8 %-ով, ընդ որում Երևան քաղաքում՝ 21.5 %-ով, իսկ մարզերում՝ 5.6 %-ով: 2014 թվականի երկրորդ կիսամյակում, 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակը նվազել է 0.4 %-ով, ընդ որում, Երևան քաղաքում՝ աճել 3.8 %-ով, իսկ մարզերում՝ նվազել 2.0 %-ով:

2014 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ² և տնամերձի 400.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների /պայմանագրային/ գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով /ներառյալ տնամերձի միավորի գինը/.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	Երկրորդ կիսամյակ 2013 թ.	Երկրորդ կիսամյակ 2014 թ.	առաջին կիսամյակ 2014 թ.
Կենտրոն	476100	476100	476100
Արաբկիր	383000	383000	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319200	319200
Ավան	270500	270500	270500
Էրեբունի	239500	239750	239600
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276000	276000
Աջափնյակ	250050	250050	250050
Մալաթիա-Սեբաստիա	238000	238000	238000
Նուբարաշեն	150500	150800	150600
Միջինը Երևանում (բացի Նոր Նորքից)	286600	286700	286600

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2014 թվականի երկրորդ կիսամյակում անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել են 0.03 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ աճել 0.03%-ով:

2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ² և տնամերձի 1000.0 մ² միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ² մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը).

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		երկրորդ կիսամյակ 2013 թ.	երկրորդ կիսամյակ 2014 թ.	առաջին կիսամյակ 2014 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136200	136200
	Ապարան	60000	60050	60050
	Թալին	69250	69250	69250
Արարատ	Արտաշատ	100000	100000	100000
	Մասիս	115100	115100	115100
	Վեդի	102300	102300	102300
	Արարատ	88000	88000	88000
Արմավիր	Վաղարշապատ	153100	153100	153100
	Արմավիր	107000	107000	107000
Գեղարքունիք	Սևան	94800	94800	94800
	Գավառ	57100	57100	57100
	Մարտունի	96100	96100	96100
	Վարդենիս	41000	41000	41000
	Ճամբարակ	31100	31100	31100
Լոռի	Վանաձոր	100000	100000	100000
	Ստեփանավան	90000	90000	90000
	Սպիտակ	114000	114000	114000
	Ալավերդի	50200	50200	50200
	Տաշիր	51900	51900	51900
	Թումանյան	12000	12000	12000
	Շամլուղ	14000	14000	14000
Կոտայք	Աբովյան	157000	157000	157000
	Նոր Հաճն	129800	129800	129800
	Բյուրեղավան	120500	120500	120500
	Եղվարդ	116100	116100	116100
	Հրազդան	82600	82600	82600
	Ծաղկաձոր	305000	305000	305000
	Չարենցավան	83000	83000	83000
Շիրակ	Գյումրի	118500	118500	118500
	Արթիկ	63100	63100	63100
	Մարալիկ	52000	52000	52000
Սյունիք	Գորիս	130000	130000	130000
	Կապան	100000	100000	100000
	Սիսիան	96500	96500	96500
	Մեղրի	84500	84500	84500
	Ագարակ	46900	46900	46900
	Դաստակերտ	11600	11610	11600
Վայոց ձոր	Վայք	90000	90050	90050
	Եղեգնաձոր	116600	116600	116600
	Ջերմուկ	131300	131300	131300
Տավուշ	Դիլիջան	113000	113000	113000
	Իջևան	123200	123200	123200
	Բերդ	60100	60100	60100
	Նոյեմբերյան	48300	48300	48300
	Այրում	36200	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ² մակերեսի շուկայական միջին

գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2014 թվականի առաջին կիսամյակի և 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ մնացել են անփոփոխ:

Ընդհանուր առմամբ, 2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարվել է 9165 միավոր (4113.37 հա) հող, որից Երևանում՝ 773 միավոր (89.24 հա): Օտարված հողերն ըստ նպատակային նշանակության բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հողեր՝ 5070 միավոր (3694.09 հա), որից Երևանում՝ 44 միավոր (7.43 հա),

- բնակելի կառուցապատման հողեր՝ 2744 միավոր (272.79 հա), որից Երևանում՝ 384 միավոր (53.70 հա),

- հասարակական կառուցապատման հողեր՝ 974 միավոր (76.57 հա), որից Երևանում՝ 325 միավոր (24.00 հա),

- արդյունաբերական օբյեկտների հողեր՝ 111 միավոր (23.05 հա), որից Երևանում՝ 20 միավոր (4.10 հա),

- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հողեր՝ 41 միավոր (32.92 հա),

- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողեր՝ 222 միավոր (9.94 հա),

- ջրային հողեր՝ 2 միավոր (3.01 հա).

- անտառային հողեր՝ 1 միավոր (1.00 հա) ընդհանուր մակերեսով:

2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում օտարված հողերից 7441 միավորի (3524.01 հա) նկատմամբ իրականացվել են առուվաճառքի գործարքներ, որից Երևանում՝ 648 միավոր (71.69 հա), նվիրատվության գործարքներ՝ 1682 միավոր (576.61 հա), որից Երևանում՝ 117 միավոր (14.98 հա) և փոխանակության գործարքներ՝ 42 միավոր (12.75 հա), որից Երևանում՝ 8 միավոր (2.57 հա):

Հանրապետությունում 2014 թվականի երկրորդ կիսամյակում, 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքների քանակն աճել է 8.6 %-ով: Ընդ որում գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքների քանակն աճել է 13.3 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ նվազել է 0.4 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 23.2 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 789.20 հա, որից 748.81 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 23.9 %-ը կամ 1777 գործարք (633.05 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 223 միավոր (9.59 հա), իսկ 75.3 %-ը կամ 5606 միավորը (2879.96 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 418 միավոր (61.79 հա): 2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել է հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 58 գործարք (10.99 հա), այդ թվում նաև կառուցապատման իրավունքի վաճառքի գործարքները:

Ստորև ներկայացվում է 2014 թվականի երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային, անտառային հողերը և վարձակալության իրավունքի վաճառքները.

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղատնտեսական նշանակության հողերի		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի						բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	10	0.52	87	3.95	126	5.12	30	5.63	10	3.59	221	40.89	157	11.68
Արագածոտն	60	77.63	1	0.01	12	1.41	30	3.49	335	294.45	0	0.00	156	16.55	15	0.53
Արարատ	64	143.21	3	1.30	67	2.45	39	1.08	574	211.81	6	0.62	269	23.28	19	0.53
Արմավիր	46	37.21	2	0.06	17	1.19	25	1.02	674	711.59	2	0.13	323	33.77	20	1.62
Գեղարքունիք	16	19.67	9	8.68	41	3.47	61	4.87	172	126.44	5	0.34	78	10.06	5	1.13
Լոռի	11	6.86	4	0.33	55	1.92	39	1.66	681	535.33	3	0.17	47	4.65	11	0.28
Կոտայք	135	173.06	8	0.90	181	11.40	85	3.48	509	346.10	4	0.56	420	41.75	66	8.99
Շիրակ	2	0.73	4	0.93	24	0.32	14	0.33	242	243.85	4	0.28	67	9.33	13	0.69
Սյունիք	15	44.18	7	1.03	9	0.65	11	1.30	135	96.19	3	1.11	37	3.55	6	0.85
Վայոց ձոր	59	30.59	1	0.26	10	0.75	10	0.32	96	36.16	1	0.01	23	2.58	9	0.41
Տավուշ	33	10.03	11	1.37	47	3.70	55	2.93	82	25.35	2	0.02	46	3.59	18	6.38
Ընդամենը	441	543.17	60	15.39	550	31.21	495	25.60	3530	2632.90	40	6.83	1687	190.00	339	33.09

Ստորև ներկայացվում է 2014 թվականի երկրորդ կիսամյակում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների և հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների, ջրային հողերը.

	Ուղղակի վաճառք								Աճուրդ վաճառք									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողերի		Գյուղ. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի								բնակելի կառուցապատ (տնամերձ) հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/	Միավոր	Մակերեսը /հա/		
Երևան	132	3.28	9	0.36	56	1.66	67	1.26	91	6.32	0	0.00	1	0.16	31	2.29	59	3.87
Արագածոտն	5	0.26	0	0.00	1	0.05	4	0.21	92	80.37	54	75.71	1	0.01	11	1.36	26	3.29
Արարատ	5	1.03	1	1.00	1	0.01	3	0.02	165	146.59	61	142.78	2	0.30	66	2.44	36	1.07
Արմավիր	13	0.48	0	0.00	4	0.09	9	0.39	76	37.92	45	36.13	2	0.06	13	1.10	16	0.63
Գեղարքունիք	18	6.21	3	5.13	7	0.52	8	0.56	104	21.84	11	11.03	6	3.55	34	2.95	53	4.31
Լոռի	31	0.39	0	0.00	14	0.19	17	0.20	78	10.38	11	6.86	4	0.33	41	1.72	22	1.47
Կոտայք	13	0.86	0	0.00	9	0.53	4	0.33	395	187.92	134	173.01	8	0.90	172	10.87	81	3.14
Շիրակ	10	0.11	0	0.00	7	0.07	3	0.04	33	1.93	1	0.46	4	0.93	17	0.25	11	0.29
Սյունիք	3	0.06	0	0.00	1	0.01	2	0.05	39	47.10	15	44.18	7	1.03	8	0.64	9	1.25
Վայոց ձոր	4	0.20	0	0.00	0	0.00	4	0.20	76	31.72	59	30.59	1	0.26	10	0.75	6	0.12
Տավուշ	16	0.60	4	0.29	5	0.06	7	0.25	127	16.57	30	9.18	7	1.07	42	3.64	48	2.68
Ընդամենը	250	13.48	17	6.78	105	3.19	128	3.51	1276	588.66	421	529.93	43	8.60	445	28.01	367	22.12

Հանրապետությունում 2014 թվականի երկրորդ կիսամյակում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 20 գործարք /13.25 հա ընդհանուր մակերեսով/:

Հանրապետությունում 2014 թվականի երկրորդ կիսամյակում, 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 15.4 %-ով: Ընդ որում, Երևանում նվազել է 25.4 %-ով, իսկ մարզերում՝ աճել է 20.3 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 49.8 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 36.5 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ նվազել է 20.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ աճել է 2.0 անգամ:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի երկրորդ կիսամյակում գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (հա)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (հա)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	28	50.29	53.5	1214.3	412.1	194	87.80	365.0	12000.0	3700.5
Ապարան	1	0.44	140.5	140.5	140.5	20	13.42	86.5	2727.3	675.2
Թալին	25	24.98	70.9	223.9	123.8	65	69.74	93.6	5494.5	743.0
Ծաղկահովիտ						52	120.54	79.5	1000.0	318.7
Արարատի մարզ										
Արտաշատ	6	4.35	115.8	1285.6	286.3	302	92.02	335.1	10833.3	2571.9
Մասիս	12	24.95	59.8	417.3	192.1	97	38.12	200.0	11904.8	2964.5
Վեդի	43	113.48	30.1	12000.0	1267.5	162	74.48	207.0	10795.1	1822.1
Արմավիրի մարզ										
Արմավիր	27	17.15	58.3	1062.6	172.3	322	234.15	294.3	9090.0	1211.2
Բաղրամյան	12	13.50	67.5	315.4	152.1	87	301.27	90.6	2561.1	834.9
Վաղարշապատ	6	5.48	63.3	2262.9	817.6	235	158.34	444.4	11764.7	1986.4
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						79	15.61	199.8	1875.0	437.6
Ճամբարակ	4	2.90	862.5	1463.8	1095.9	1	0.17	60.5	953.3	355.2
Մարտունի	2	1.62	128.6	128.6	128.6	28	6.97	51.1	2850.0	775.1
Սևան	3	2.80	172.5	2166.7	1173.4	15	11.12	52.2	2134.8	328.5
Վարդենիս	2	3.70	57.1	316.8	187.0	40	87.41	41.2	2575.1	412.5
Լոռու մարզ										
Ալավերդի	1	0.08	524.7	524.7	524.7	30	14.51	170.4	6424.2	597.1
Գուգարք	5	0.83	186.7	1154.8	435.3	171	46.72	234.6	6065.9	807.5
Սպիտակ	1	0.12	687.7	687.7	687.7	23	9.10	250.0	5555.5	706.3
Ստեփանավան	2	1.51	409.6	1159.8	784.7	51	34.08	90.6	1686.6	350.8
Տաշիր	2	4.32	452.8	805.2	629.0	397	423.70	45.3	1384.4	180.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	42	43.78	63.9	14736.8	810.2	197	85.25	279.3	11942.7	4056.2
Եղվարդ	65	95.15	72.7	9750.0	630.2	226	206.26	174.4	11971.8	2424.3
Հրազդան	27	34.07	92.0	1980.0	491.1	71	46.11	130.5	10256.4	1284.5

Շիրակի մարզ										
Ախուրյան	1	0.46	1724.8	1724.8	1724.8	90	65.22	252.0	1693.1	614.6
Ամասիա						7	22.10	40.9	261.0	130.0
Անի						86	102.39	110.6	546.9	424.7
Աշոցք						11	14.23	58.5	215.8	134.5
Արթիկ						43	30.89	79.4	1428.6	466.9
Սյունիքի մարզ										
Գորիս	3	1.17	131.4	1884.6	715.8	27	27.73	92.6	1023.2	757.5
Կապան	2	2.94	77.0	1143.9	610.5	25	5.47	120.0	841.6	384.3
Մեղրի	9	39.07	77.0	616.0	236.0	8	1.31	193.0	3000.0	749.0
Սիսիան	1	1.00	150.0	150.0	150.0	71	56.93	46.3	1977.4	565.2
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	43	20.07	21.7	730.3	221.3	50	22.14	125.0	10000.0	1864.3
Վայք	16	10.52	69.0	215.2	139.3	45	13.84	58.8	1430.7	633.6
Տավուշի մարզ										
Բերդ						38	9.43	213.3	3783.8	695.0
Իջևան	21	4.60	153.5	3300.0	1594.7	26	7.45	267.5	9454.5	1313.5
Նոյեմբերյան	9	4.58	133.4	2301.2	1118.9	18	8.46	46.7	7368.4	949.7

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման մեծ միջակայքը կապված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացվում են 2014 թվականի երկրորդ կիսամյակում բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0 մ² մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանումը	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի աճուրդային վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքների				
	Միավորների քանակը	Մակերեսը (մ ²)	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակը	Մակերեսը (մ ²)	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 մ ² մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	6	4777.5	112.7	3846.2	1366.6	116	112020.4	130.7	22200.0	2584.4
Ապարան	1	317.0	563.1	563.1	563.1	20	21063.0	124.1	609.6	391.1
Թալին	4	8543.0	52.5	712.8	168.3	14	23658.0	63.2	1454.8	152.6
Ծաղկահովիտ						3	6326.0	60.0	214.3	93.0
Արարատի մարզ										
Արտաշատ	11	11237.1	235.0	3833.3	1179.8	83	79974.4	173.9	7140.3	904.9
Մասիս	46	10460.1	667.3	7860.0	2827.8	126	95252.1	187.5	25000.0	1223.1
Վեդի	9	2749.8	176.0	2941.2	1273.0	55	52400.0	126.1	5000.0	664.8
Արմավիրի մարզ										
Արմավիր	6	5800.8	359.7	3822.0	1498.9	98	115334.2	131.6	9090.9	1214.9
Բաղրամյան	4	3987.0	233.1	233.5	233.3	9	14573.0	100.0	833.3	240.0
Վաղարշապատ	3	1236.0	95.9	2047.5	1070.3	201	188907.0	197.4	26528.4	1532.3
Գեղարքունիքի մարզ										
Գավառ	14	15515.7	124.5	193.1	147.9	17	21749.0	186.6	1084.3	684.3
Ճամբարակ	3	2703.7	84.5	373.3	213.1	2	1416.0	71.3	2286.2	148.1
Մարտունի	11	7204.0	113.4	394.6	253.8	32	32558.9	119.3	5000.0	287.8
Սևան	2	1507.0	372.6	1210.9	791.8	8	9697.0	240.0	3110.4	328.4
Վարդենիս	4	2575.0	49.5	198.0	116.3	16	30371.6	72.5	987.2	150.2
Լոռու մարզ										
Ալավերդի	16	10498.7	234.1	1800.0	1278.6	9	10290.0	114.3	1388.9	217.4
Գուգարք	22	5238.9	210.0	5204.7	1569.5	20	16504.5	77.9	14083.3	1262.4
Սպիտակ	2	857.6	151.9	1029.1	590.5	8	9501.0	104.9	1348.3	207.6

Ստեփանավան	1	651.8	253.2	253.2	253.2	8	7914.4	88.2	1666.7	175.6
Տաշիր						2	2300.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	154	97138.2	351.2	6297.3	3187.8	224	174892.2	264.5	35353.5	2041.6
Եղվարդ	16	9634.8	1279.5	4599.0	2923.8	164	205547.8	173.6	27000.0	2878.7
Հրազդան	2	1895.0	817.7	2105.4	1461.6	31	36274.0	117.7	34848.5	1322.9
Շիրակի մարզ										
Ախուրյան	14	2235.8	580.8	5723.6	4133.6	32	39940.8	113.6	18750.0	336.3
Ամասիա						2	4683.3	45.3	274.7	72.0
Անի	2	63.0	629.6	655.0	642.3	13	24494.3	67.9	180.6	186.8
Աշոցք						1	6380.0	40.8	144.0	65.0
Արթիկ	1	203.2	224.5	224.5	224.5	16	16570.3	111.8	5000.0	218.4
Սյունիքի մարզ										
Գորիս	1	334.6	298.9	298.9	298.9	11	11696.0	112.2	1700.0	369.9
Կապան	5	5674.2	105.6	1690.1	901.5	10	5976.0	67.9	2638.9	329.9
Մեղրի	1	175.4	107.2	107.2	107.2	11	6243.0	68.5	632.9	232.3
Սիսիան	1	235.0	660.0	660.0	660.0	5	11603.0	123.5	875.0	225.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	9	7117.7	158.4	396.4	267.1	20	21512.4	96.7	7659.6	511.0
Վայք	1	348.7	852.2	852.2	852.2	3	4270.0	120.7	1448.3	241.0
Տավուշի մարզ										
Բերդ	1	135.5	1107.0	1107.0	1107.0	5	3935.4	75.8	810.0	122.5
Իջևան	38	34738.4	73.2	3000.0	2051.4	32	21959.1	74.1	14423.1	553.7
Նոյեմբերյան	3	1563.0	241.2	850.7	407.6	7	8385.4	125.0	1948.1	236.0

2014 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 4154 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 3.6 %-ը:

2014 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակը, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 1.3 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 3.7 %-ով:

2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 316 բնակարան, 529 անհատական բնակելի տուն, 1751 հասարակական և 402 արտադրական նշանակության օբյեկտի, 1084 հողի, 5 այգետնակի և 67 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, անհատույց օգտագործման և սերվիտուտի իրավունքի պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2014 թվականի երկրորդ կիսամյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 29 վարձակալության գործարքների քանակը 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ նվազել է 27.5 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 54.7%-ով:

2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում վարձակալված 2510.56 հա հողերից 29.04 հա վարձակալվել են Երևանում: Մարզերում վարձակալված 2481.51 հա հողերի 2145.33 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 51.82 հա՝ արդյունաբերական օբյեկտների, 123.94 հա՝ հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Վայոց ձորի մարզում՝ 497.09 հա, որից 492.28 հա՝ գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի երկրորդ կիսամյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 13113 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 11.5%: 2014 թվականի երկրորդ կիսամյակում

գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 8.0 %-ով , իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 3.6 %-ով:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.7 %), առանձնատների (24.0 %), հասարակական նշանակության օբյեկտների (11.1 %) և հողերի (7.9 %) նկատմամբ: Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7421 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակը, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, աճել է 10.9 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ նվազել 2.9 %-ով:

2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 901 գործարք, որից 599՝ Երևանում: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ, նվազել է 10.0 %-ով, ընդ որում Երևանում՝ 10.2 %-ով, իսկ մարզերում՝ 9.6 %-ով: Հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ, նվազել է 17.1 %-ով, ընդ որում Երևանում՝ 20.7 %-ով, իսկ մարզերում՝ 9.0 %-ով:

2014 թվականի առաջին կիսամյակում հանրապետությունում գրավադրվել են 1767.10 հա մակերեսով հողեր, որից 56.60 հա Երևանում: Ընդ որում գրավադրված հողերի 87.0 % կամ 1537.91 հա գյուղատնտեսական նշանակության հողեր են, որից Երևանում՝ 1.56 հա: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արագածոտնի մարզում՝ 521.68 հա, որից 518.94 հա գյուղատնտեսական նշանակության:

2014 թվականի երկրորդ կիսամյակում հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի 11855 առաջնային գրանցումներ՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2014 թվականի առաջին կիսամյակի համեմատ աճել է 11.9 %-ով, իսկ 2013 թվականի երկրորդ կիսամյակի համեմատ՝ 7.1 %-ով: Առաջնային գրանցումների ընդհանուր քանակն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 10.4 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (22.4 %):

«Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե